ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՌՈԲԵՐՏ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ՝ ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ

21.06.2026

Սիրելի՛ բուժաշխատողներ

Առողջապահության ոլորտի հարգելի՛ ներկայացուցիչներ
Սրտանց շնորհավորում եմ ձեզ մասնագիտական տոնի՝ Բուժաշխատողի օրվա առթիվ:
Այսօր Հայաստանի Հանրապետությունում ընթանում են առողջապահական համակարգի արմատական և հեռանկարային բարեփոխումներ, որոնց նպատակն է ստեղծել որակյալ, հասանելի և արդիական բժշկական ծառայություններ յուրաքանչյուր քաղաքացու համար:
Սակայն պետական քաղաքականությունը, նաև ենթակառուցվածքների զարգացմանն ու վերազինմանն ուղղված յուրաքանչյուր ծրագիր հաջողված է դառնում միայն ոլորտի աշխատակիցների մասնագիտական բարձր պատասխանատվության շնորհիվ: Դուք այն առանցքն եք, որի վրա հենվում է այս մեծածավալ բարեփոխումների հաջողությունը:
Սյունիքի մարզի բժշկական կենտրոնների, ամբուլատորիաների և բուժկետերի հարգելի՛ աշխատակիցներ, մեր տարածաշրջանի համար ձեր ամենօրյա աշխատանքն ունի նաև ռազմավարական նշանակություն:
Շնորհակալություն եմ հայտնում ձեզ անդուլ նվիրումի, մեր բոլոր բնակավայրերում պատվով ու բարձր գիտակցումով ձեր առաքելությունն իրականացնելու և մեր բնակիչների առողջության պահպանման գործում ներդրած գնահատելի ջանքի համար:
Մաղթում եմ բոլորիդ ամուր առողջություն, անսպառ տոկունություն և մասնագիտական նորանոր ձեռքբերումներ:
Թող ձեր քրտնաջան աշխատանքը միշտ փոխհատուցվի մեր քաղաքացիների առողջ ժպիտներով և անկեղծ երախտագիտությամբ: